ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՎԱՂ ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՄԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Վ. Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ

Հայաստանը վաղ քրիստոնեության տարածման ոլորտներից մեկն էր։ Դա պայմանավորված էր հելլենիստական Արևելքում Քրիստոսի առաքյալներ Թադեոսի և Բարդուղիմեոսի քարոզչական կանխորոշ գործունեությամբ։ Հայտնի է, որ հելլենիզմը թափանցեց ոչ միայն Հայաստան, այլև Իրան, որտեղ նույնացվում էին պարսկական և հունական աստվածները[1]։ Կրոնապաշտամունքային աղերսներ կային նաև Իրանի և հելլենականացված Պոնտոսի ու Կապադովկիայի միջև։ Ստրաբոնը վկայում է, որ մ.թ.ա. I դ. կեսերին պարսից զորքի գրաված Զելա քաղաքում (պոնտական Կապադովկիայում) պարսիկները կառուցեցին Անահիտի, Ման և Անադատ պարսկական աստվածների տաճարները և ամենամյա կրոնական ծեսեր սահմանեցին[2]։ Այստեղից պարսից կրոնն ուղի հարթեց դեպի Արևմուտք՝ Հռոմեական կայսրություն, որտեղ տարածվեց հնգկա-իրանական լույսի և բարության աստված Միթրասի (Միհրի) պաշտամունքը՝ վերածվելով արևի աստվածության[3]։ Նույն աստվածների պաշտամունքն առկա էր Հնդկաստանում և Իրանում[4], ինչպես և Հայաստանում[5]։ Ուստի քրիստոնյա առաքյալները Արևելքում քարոզչական գործունեության համար միասնական ասպարեզ էին համարում Հնդկաստանը, Իրանը, և Հայաստանը։ Միջագետքը դիտվում էր որպես իրանական քաղաքակրթության մանրանկարը։ Տակիտոսը հիշատակում է, որ Նինվեի մոտ էր գտնվում Հերակլեսի պաշտամունքի վայրը[6]։ Հերակլեսն այնտեղ անձնավորում էր պարսկական աստվածությունը[7]։

Հնդկաստանում քրիստոնեության առաջին տարածողներ են համարվում Թովմաս և Բարդուղիմեոս առաքյալները։ Թովմաս առաքյալի հունարեն և հայերեն վկայարանությունների մեջ նշվում է Հնդկաստանում Թովմասի քարոզության և նահատակման մասին[8]։ IV դ. մատենագիրներ Եվսեբիոս Կեսարացին և Եփրեմ Ասորին վկայում են Հնդկաստանում Բարդուղիմեոս առաքյալի քարոզչության մասին[9], իսկ V դ. պատմագիր Սոկրատ Սքոլաստիկոսը նշում է, որ Բարդուղիմեոսը քարոզել է իրեն վիճակված Հնդկաստանում և Հայաստանում[10]։ Հայերեն ձեռագիր հիշատակարաններում նույնպես նշվ-

---

[1] The Cambridge history of Iran, vol. 3 (1). Cambridge, 1983, p. 77, 101—102.

[2] Страбон, Географня, пер. Г. А. Стратановского, Л., 1964, XI, 8, с. 484.

[3] A. Olmstead, History of the Persian empire, Chicago, 1970, p. 479.

[4] The Cambridge history..., p. 314.

[5] *Ենթադրվում է, որ Միթրասի (Միհրի) պաշտամունքը արտացոլված է «Մասնա ծուր» Լպոսում՝ ի դեմս Մեծ Մհերի (տե՛ս* The Cambridge history, p. 534).

[6] Корнелий Тацит, Сочинения, т. I, Л., 1970, с. 201.

[7] The Cambridge history..., p. 77.

[8] *Տե՛ս* G. Garitte, La passion Armenienne des, Thomas l'apotre et son modelie grec (le Museon, Revue d'etudes orientales, LXXXIV, Louvain, 1971, p. 158, 192).

[9] *Եվսեբիոսի Կեսարացւոյ Պատմութիւն Եկեղեցւոյ, Վենետիկ, 1877, էջ 364, Ս. Եփրեմի Մատենագրութիւնք, հ. Ա, Վենետիկ, 1836, էջ 259։*

[10] Sokrates Kirchengeschichte. Herausgegeben. von G. Hansen, Berlin, 1995, S. 60—61.

վում է Հնդկաստանում Թովմաս առաքյալի քարոզչության մասին[11]։ Ուշագրավ է, որ Մաշտոցի անվան Մատենադարանում պահվող մի ձեռագրում (երում է «Պատմութիւն Թովմայի առաքելոյն ոտանաւոր չափիւք» վերտառությունը) պատմվում է Թովմաս առաքյալի Հնդկաստան մեկնելու, տեղի արքունիքին, բնակչությանը դարձի բերելու և նահատակվելու մասին։ Նույն ձեռագրում բերվում է մի պարսիկ զորականի տեսիլը, երբ նա, հրեշտակից ստացած հրամանի համաձայն, Թովմաս առաքյալի մասունքները տեղափոխում է Հայաստան՝ Վասպուրականի Ռշտունիք գավառի Պարծիս գյուղ, որտեղ առաքյալի նշխարների ամփոփման տեղում կառուցում է վանք[12]։ Վասպուրականը սահմանակից էր Իրանին, ուստի քրիստոնեությունը Հնդկա-իրանական ոլորտներից կարող էր առաջին հերթին մուտք գործել այնտեղ։ Թովմաս առաքյալի մասունքները Հնդկաստանից պարսիկ զորականի կողմից Հայաստան տեղափոխելու մասին պատումը թերևս պատմական վերհուշ է երեք երկրներում քրիստոնեության տարածման գործընթացի միասնական արմատների մասին։ Ավելի ուշ Թովմաս առաքյալի պաշտամունքը տարածվեց Եդեսիայի թագավորությունում[13], որը, նախքան մեր թվականությունը, ստեղծել էին Միջագետք թափանցած արաբները՝ Աբգարների տոհմի գլխավորությամբ[14]։

Հայ մատենագիրները ևս Քրիստոսի աշակերտներ Թադեոսի, Բարդուղիմեոսի և մյուս առաքյալների քարոզչության ասպարեզ են համարում Արևելքի երկրները։ Ագաթանգեղոսը գրում է, որ Քրիստոսի աշակերտները քարոզչություն են ծավալել «ի Մարս և ոմանք ի Պարթևս. ոմանք ի Խուժաստան...»[15]։ Քրիստոնեությունը ծագեց Արևելքում և, բնականաբար, առաջին հերթին այն պետք է տարածվեր այնտեղ։ Այն-փաստը, որ ավանդական ոլորամությունը Թադեոսի և Բարդուղիմեոսի քարոզչության և նահատակության վայր է համարում Վասպուրականը, թույլ է տալիս կարծել, որ նրանք գործել են նախ Իրանում, ապա անցել են Հայաստան, որտեղ այդպիսով ավարտվել է նրանց քարոզչության վերջնափուլը։ Առաքյալների գլխավոր նպատակը Հնդկա-իրանական երկրներում քրիստոնեության տարածումն էր։ Այլ կերպ նրանց առաքելությունը Արևելքում հեղաշրջող նշանակություն չէր ունենա։ Քանի որ Միջագետքը ևս գտնվում էր իրանական քաղաքակրթության ոլորտում, ուստի ավանդությունը Թադեոսի քարոզչության վայր է համարում նաև այդ երեքը։ Բայց հարկ է նշել, որ Իրանից Թադեոսի և Բարդուղիմեոսի Հայաստան անցնելը վկայում է Իրանում նոր կրոնի տարածման դեմ հարուցված

---

11 Յուցակ հայերեն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Հ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 56։ A catalogue of the Armenian manuscripts in the British museum, London, 1913, p. 5.

12 Հ. Անասյան, Մանր երկեր, Լոս Անջելես, 1987, էջ 740—741։

13 Е. Мещерская, «Деяния Фомы». К вопросу о языке оригинала (Кавказ и Византия, 6, 1988, с. 127).

14 Р. Фрай, Наследие Ирана. М., 1972, с. 327.

15 Տե՛ս Ագաթանգեղայ Պատմութիւն Հայոց, աշխ. Գ. Տէր-Մկրտչեանի և Ստ. Կանայեանցի, Տփղիս, 1909, ՂԳ, էջ 355, ՂԴ, էջ 357։ Դիտելի է, որ նոիշեն առաքյալների քարոզչության ասպարեզ է համարում նաև Արևելքը (Ղազար Փարպեցի Վասն Վարդանայ և Հայոց պատերազմի, աշխ. Ե. Տեր-Մինասյանի, Երևան, 1957, II, էջ 29)։ Գրիգոր Նարեկացին իր «Ներբող առաքելոց» գործում նշում է, որ առաքյալները քարոզել են «զվայրս արևելայինս Մարաց և Արևաց պարթևականաց» (տե՛ս Գրիգոր Նարեկացի, Մատենագրութիւնք, Վենետիկ, 1840, էջ 436)։ Թեև Բարդուղիմեոսի Վարքի պարոկատանյան հատվածը երփնազարդված է վկայաբանական երանգներով, սակայն արտացոլում է իրական-պատմական անցքերը և ժամանակի հասարակական աշխարհազգացողությունը, ուստի որոշակի աղերսներ ունի ավելի հին սկզբնաղբյուրի հետ (տե՛ս J. Russell, Bad day at Buzzen Mihr. Notes on An Armenian legend of St. Bartholomew (Բազմավեպ, 1986, էջ 264—265),

արդիլքների մասին։ Ինչպես ցույց են տալիս Սելևկիայի և Դուրա-Եվրոպայի պեղումները, I դ. կեսերին, այսինքն՝ Թադեոսի և Բարդուղիմեոսի քարոզչության ժամանակ, Իրանի հոգևոր-մշակութային կյանքում վճռական բեկում տեղի ունեցավ դեպի տեղական հոգևոր արժեքները[16], ինչը կարող էր օգնել քրիստոնեամերժ միտումներ։

Հայաստանում վաղ քրիստոնեության տարածումը արտացոլվել է Թադեոսի, Բարդուղիմեոսի և այլոց վկայաբանություններում, որտեղ թեև իրական-պատմական եղելությունները խեճված են վիպական, հնարածո զրույցների մեջ, սակայն ավանդախառն այդ պատումներն ունեն տարբեր փոփոխակներ, ինչը որոշ հիմք է տալիս կարծելու, որ դրանք ունեցել են միասնական պատմական հենք։ Ուշագրավ է, որ Փավստոս Բուզանդը և Մովսես Խորենացին նշում են, որ իրենցից առաջ ուրիշ մատենագիրներ գրել են Թադեոս առաքյալի քարոզչության և մարտիրոսական մահվան մասին[17]։ Անշուշտ, պատմագիրները նկատի ունեն նաև Թադեոսի վկայաբանությունը[18]։ Թադեոս առաքյալի մասին պատումով է սկսվում Մ. Վան Էսբրուքի՝ 1971 թ. հրատարակած Ագաթանգեղոսի Պատմության արաբերեն մի տարբերակը, որը պետք է հայերենից թարգմանված լինի[19]։ Թադեոսի վկայաբանությունը հայերենի է թարգմանվել Սամուել հրշի կողմից (ըստ նույն գրչի թողած հիշատակարանի)[20]։ Թարգմանությունը հավանաբար կատարվել է V դ. սկզբին, հունարենից կամ ասորերենից։ Հայաստանում տակավին Տիգրան Մեծի ժամանակներից կար հրեա, ասորի և հույն զաղթականություն, որը կարող էր նպաստել քրիստոնեության տարածմանը և, հնարավոր է, որ հենց նրանք էլ պահպանել և հետագայում հայերենի են թարգմանել Թադեոսի ու մյուս մարտիրոսների վկայաբանությունները։

Հայտնի է, որ I դ. քրիստոնեությունը հալածվում էր Հռոմեական կայսրությունում։ Հայաստանը, իբրև Հռոմի «դաշնակից և բարեկամ», նույնպես բացասական դիրքորոշում ուներ քրիստոնյա քարոզիչների հանդեպ։ Դա արտացոլվել է Թադեոսի և Բարդուղիմեոսի վկայաբանություններում[21], որտեղ նկատելի է իրական-պատմական ատաղձը։ Քրիստոսի այս երկու աշակերտները Հայաստան են ժամանել Հնդկաստանում և Իրանում իրենց քարոզչությունից հետո, Հայաստանում Արշակունիների գահակալումից առաջ՝ հավանարար մ. թ. 30—50-ական թթ. միջև ընկած ժամանակամիջոցում, երբ Հայաստանում հիմնականում իշխում էին Հռոմի դրածոները։ Վերջիններս, հասկանալի է, որդեգրելու էին կայսրության քրիստոնեահալած ուղեգիծը։ Հռոմում քրիստոնյաների հանդեպ եղած հալածանքները կարող էին նրանց նկատմամբ հանդուրժամտություն սերմանել պարթև Արշակունիների արքունիքում և բնակչության որոշ խավերում։ Այդ պայմաններում առաքյալների քարոզչության համար Իրանում կարող էր որոշակի հող ստեղծվել։ Ուշագրավ է, որ պարսից քրիստոնեական եկեղեցին Իրանում քրիստոնեության առա-

---

16 История Ирана, М., 1977, с. 103.

17 Փաւստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն Հայոց, Ս. Պետերբուրգ, 1883, III, Ա, էջ 5, Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց, աշխ. Մ. Աբեղյանի և Ս. Հարությունյանի, Տփղիս, 1913, II, ԼԴ, էջ 157։

18 Ստ. Մալխասյանց, Բանասիրական հետազոտություններ, Երևան, 1982, էջ 83։

19 M. Van Esbroeck, Un nouveau témoin du livre of Agathange [Revue des Etude Arméniennes, (այսուհետև՝ REA), Paris, N. 8, 1971, p. 22].

20 Սուիերք հայկականք, հ. Ը, Վենետիկ, 1853, էջ 58։

21 Տե՛ս նույն տեղում, էջ 16, 37—39, հ. ԺԹ, Վենետիկ, 1854, էջ 26—29, Մ. Ավգերեան, Լիակատար վարք և վկայաբանութիւն սրբոց, հ. Դ, Վենետիկ, 1813, էջ 35—37, 46—51, Թանգարան հայկական հին և նոր դպրութեանց, հ. Գ, Անկանոն գիրք առաքելականք, կազմեց Հ. Ք. Զրաքեան, Վենետիկ, 1904, էջ 353—356, 365—366։

չին քարոզիչ է համարում Թադեոսին[22]։ Բայց Քրիստոսն ուներ Թադեոս անվամբ երկու առաքյալներ. առաջինը նրա 12 աշակերտներից մեկն էր, որ հայտնի էր նաև Հուդա անունով։ Իրանում և Հայաստանում քարոզել է այս առաքյալը։ Մյուս Թադեոսը Քրիստոսի 72 աշակերտներից մեկն էր և ասորական գրականության մեջ հիշվում է Ադդա անունով։ Ասորական վաղագույն գրական երկերից մեկում՝ «Ադդայի վարդապետության» մեջ նշվում է, որ իբր տակավին Եդեսիայի Աբգար V թագավորի օրոք (մ. թ. 4—7, 13—50 թթ.) Ադդա-Թադեոսը քրիստոնեություն է տարածել Օսրոյենե պետության մեջ, և որ Աբգար V-ը ընդունել է նոր կրոնը, ապա Ադդա-Թադեոսը վախճանվել է Եդեսիայում[23]։ Սակայն հայտնի է, որ Աբգար V-ը եղել է հեթանոս, չի ընդունել քրիստոնեությունը, որը Եդեսիայում ընդունվել է միայն Աբգար IX թագավորի (179—214) ժամանակ։ Եվսեբիոս Կեսարացին հավաստում է, որ II դ. կեսերին Եդեսիայում կային քրիստոնեական համայնքներ[24] (նկատենք, որ Եվսեբիոսի այս երկում ոչ մի հիշատակություն չկա Եդեսիայում Թադեոսի վախճանվելու մասին)։ Հասկանալի է, պատմական հիմքից զուրկ է Եդեսիայում Թադեոս առաքյալի քարոզչության և այնտեղ վախճանվելու մասին ավանդազրույցը, որը ստեղծված է համարվում Եդեսիայի թագավոր Աբգար VIII-ի (165—167) օրոք[25]։

Ըստ Թադեոսի Վկայաբանության, Թադեոսը և Բարդուղիմեոսը Հայաստանում միմյանց են հանդիպել Արտաշատ քաղաքի մոտ[26], հավանաբար, քրիստոնեությունը հայոց մայրաքաղաքում և, առաջին հերթին, արքունիքում սերմանելու նպատակադրումով (դրանից հետո դյուրին կլիներ նոր կրոնը ժողովրդի մեջ տարածելը)։ Վկայաբանության մեջ նշվում է, որ Թադեոսը Միջագետքից եկել է Հայաստան, Սանատրուկ թագավորի մոտ՝ նրա ամառային ապարանք, որը Վասպուրականի Արտաշ գավառի Շավարշան գյուղաքաղաքում էր։ Ընդ որում, Թադեոսը կարողացել է արքունի վերնախավի մի մասին դարձի բերել[27]։ Սակայն Միջագետքից Թադեոսի՝ Հայաստան ժամանելու զրույցը չի հաստատվում այլ սկզբնաղբյուրներով։ Այն, հավանաբար, վկայաբանության մեջ է ներմուծվել ասորական գրական ավանդության ազդեցությամբ[28]։

Թադեոսի և Բարդուղիմեոսի վկայաբանության համաձայն, երկու առաքյալները սպանվել են Հայոց Սանատրուկ թագավորի հրամանով։ Ըստ Թադեոսի վկայաբանության մեկ այլ տարբերակի, այս առաքյալը Սանատրուկի հրամանով նահատակվել է Պարսկահայքի Որմի քաղաքում[29]։ Վկայարա-

---

22 J. Labourt, Le Christianisme dans l'empire Perse sous la dinastie Sassanide. Paris, 1904, p. 12—13.

23 «Ադդայի վարդապետության» հայերեն թարգմանության մեջ Ադդեն (Ադդան) Եդեսիայում քարոզելուց հետո մեկնում է Արևելք՝ քրիստոնեություն տարածելու (տե՛ս Ղ ե ր ո ւ ր ն ա Բ գ ե ս ա ց ի, Թուղթ Աբգարու թագաւորի Հայոց, և քարոզութիւնք ս. Թադէի առաքելոյ, Երուսաղեմ, 1868, էջ 46)։

24 Եվսեբիոսի Կեսարացւոյ Պատմութիւն..., էջ 75։

25 J. B. Segal, Edesse „the Blessed city", Oxford, 1970, p. 15.

26 Մ. Ա վ գ ե ր ե ա ն, Լիակատար վարք և վկայարանութիւն սրբոց, հ. Թ, Վենետիկ, 1813, էջ 480, Սոփերք հայկականք, հ. ԺԹ, էջ 25—26։

27 Սոփերք հայկականք, հ. Ը, էջ 13 և այլն։

28 Այս փաստն արձագանք է գտել նաև «Կանոնք առաքելականք» գործում (տե՛ս Կանոնագիրք Հայոց, աշխ. Վ. Հ ա կ ո բ յ ա ն ի, հ. Ա, Երևան, 1964, էջ 61—62)։ Անշուշտ, Թադեոսի և Բարդուղիմեոսի վկայաբանություններն ունեցել են համաքրիստոնեական արմատներ և վիպականացվել, գրական տեսք են ստացել Հայաստանում (այս մասին տե՛ս M. Van Esbroeck, La naissaece du culte de S. Barthélemy en Armenie (REA, 1983, № 17, p. 194—195).

29 Մ. Ա վ գ ե ր ե ա ն, նշվ. աշխ., հ. Թ., էջ 480։

նությունը Բարդուղիմեոսի նահատակվելը դնում է Ուրբիանոս քաղաքում[30], իսկ Մովսես Խորենացին գրում է. «Վիճակեցաւ հայոց և Բարդուղիմէոս առաքեալ, որ ե կատարեցաւ առ մեզ յԱրեբանոս քաղաքի»[31]։ Հետագայի եվրոպական որոշ աղբյուրներ նշում են, որ Բարդուղիմեոս առաքյալը նահատակվել է Մեծ Հայքի Ուրբիանոս կամ Արբանոպոլիս քաղաքում, որը նույնական է Խորենացու հիշատակած Արեբանոսի հետ[32]։ (Թերևս, Արեբանոսը կամ Ուրբանոպոլիսը եղել է Հայաստանի տաճարական կենտրոններից մեկը)։ Բայց Բարդուղիմեոսի լատիներեն վկայաբանության մեջ նշվում է, որ այս առաքյալը նահատակվել է Հնդկաստանում[33]։

Իհարկե, Սանատրուկի հրամանով Թադեոսի, Բարդուղիմեոսի և նրանց հետևորդների նահատակվելը պատմականորեն չի հիմնավորվում այն պարզ պատճառով, որ Սանատրուկը ժամանակակից չէ այդ առաքյալներին։ Նա թագավորել է I դ. վերջին և II դ. սկզբներին[34]։ Ա. Գարագաշյանը կարծում է, որ Թադեոսին ու Բարդուղիմեոսին սպանած պետք է լինի մ. թ. 30—40 թթ. Հայաստանում գահակալած Միհրդատը՝ վրաց Փարասման թագավորի եղբայրը[35], որը, ինչպես հայտնի է, Հռոմի դրածոն էր և, հարկ է, որ Հայաստանում իրականացներ նրա քրիստոնեահալած քաղաքականությունը։ Բայց նույնքան հետևողականությամբ քրիստոնյա քարոզիչներին կարող էին հալածել նաև հեթանոսաբարո հայ նախարարները։ Այսպես կարծելու համար որոշ հիմք է տալիս Ծոփքի Անգեղտուն դավառի կենտրոն, եպիսկոպոսանիստ Անդրը բերդաքաղաքում Թադեոսի նահատակության մասին ավանդությունը, որի հետ թերևս աղերս ունի Անգղում Քրիստոսի մեկ այլ առաքյալի՝ Անդրեասի նահատակության մասին ասորական ավանդությունը[36]։ Հնարավոր է, որ Թադեոսն իրոք նահատակվել է Անգղում, տեղացի իշխանի կողմից, բայց ավանդությունն այդ արյունոտ ոճիրը վերագրել է Սանատրուկ թագավորին[37]։ Գուցե Սանատրուկը Թադեոսին սպանող է ներկայացվել այն պատճառով, որ հայոց թագավոր լինելով, մտել է ժողովրդի հիշողության մեջ, նրա մասին հնագույն ժամանակներից պահպանվել են ավանդություններ[38]։

Անկախ այն բանից, թե ում ձեռքով և որտեղ է նահատակվել Թադեոսը, պետք է ընդունել, որ նա քարոզչական գործունեություն է ծավալել Իրանում և Հայաստանում՝ բարքերով, հավատալիքներով միմյանց մերձավոր դրացի այդ երկրներում։ Հավանաբար պատմական այս իրողության ազդեցությամբ է, որ Ագաթանգեղոսը Գրիգոր Լուսավորչի հորը՝ Անակին, համարում է պարթև, իմա՝ Իրանի զավակ[39]։ Միջագետքից Թադեոսի Հայաստան անցնելու ավանդությունը հավանորեն պետք է ստեղծված լինի այն իրողության ուժով, որ Միջագետքը Արշակունյաց Իրանի քաղաքական ազդեցության ոլորտում էր, ուստի նրա հետ միասին կարող էր դառնալ առաքյալների քարոզչության ասպարեզ։ Եվ որովհետև Հայաստանը դարձավ Թադեոսի քարոզչության բնագավառը, ուստի ավանդությունը Իրանը, Միջագետքը և Հայաստանը դիտում է որպես այդ առաքյալի քարոզչական գործունեության

---

30 Սովերք հայկականք, հ. ԺԹ, էջ 29։

31 Մովսիսի Խորենացւոյ Պատմութիւն..., II, ԼԴ, էջ 158։

32 J. Marquart, Untersuchungen zur Geschichte von Eran, II, Leipzig, 1906, S. 232—233.

33 Նույն տեղում, էջ 232։

34 Հ. Մանանդյան, Երկեր, հ. Բ, Երևան, 1978, էջ 19։ M. Van Esbroeck, Le rol Sanatruk et l'apotre Thadee (REA, 1972, t. IX, p. 242).

35 Ա. Գարագաշեան, Քննական պատմութիւն Հայոց, Թիֆլիս, 1895, էջ 273։

36 Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, СПб., 1908, с. 347.

37 Հմմտ. M. Van Esbroeck, Le rol Sanatruk..., p. 282—283.

38 J. Marquart, Untersuchungen... II, S. 231—232.

39 Ագաթանգեղայ Պատմութիւն..., Բ, էջ 20—22, ԺԱ, էջ 70—71։

միասնական ոլորտ։ Նույն մտայնությամբ է, որ «Կանոնք առաքելականք»-ում ասվում է, թե Թադեոսը հոգևորականներ է ձեռնադրել Միջագետքում, Իրանում և Հայաստանում[40]։

Մովսես Կաղանկատվացին Թադեոսին համարում է նաև Աղվանքում քրիստոնեություն տարածող՝ այն լծորդելով Հայաստանում նրա քարոզչական գործունեության և նահատակության հետ[41]։ Պատմիչը Աղվանից առաքյալ է համարում Եղիշեին, որը Թադեոսի աշակերտն էր և Հայաստանում քարոզելուց հետո անցել էր Աղվանք[42]։ Մատթեոս Ուռհայեցին Թադեոսին ու Բարդուղիմեոսին համարում է Աղվանից եկեղեցու հիմնադիրներ՝ միաժամանակ շեշտելով Հայաստանում նրանց քարոզչության մասին[43]։

Հայաստանում Թադեոսի, Բարդուղիմեոսի գործունեությունը արտացոլք է գտել նաև նրանց կողմից բազմաթիվ վանքերի ու եկեղեցիների հիմնարկման մասին եղած հայ ժողովրդական ավանդության մեջ, որի համաձայն, Հայաստանում Թադեոսն ու Բարդուղիմեոսը հիմնել են մոտ հազար եկեղեցի[44]։ Ընդ որում, դրանց զգալի մասը հիմնարկված է համարվում Վասպուրականում և հարակից շրջաններում, որոնք, ինչպես վերևում նշվեց, Իրանին սահմանակից էին։ Հուշագրավ է, որ Սովսես Խորենացուն վերագրվող «Պատասխանի թղթոյն Սահակայ» գործում ասվում է, թե Բարդուղիմեոս առաքյալը «մոգուց և Պարսից» երկրից անցել է Վասպուրական և հեթանոսական պաշտամունքի կենտրոն Դարբնաց քար վայրում (Անձևացյաց գավառ) հիմնել է եկեղեցի՝ նրա մեջ ամփոփելով Տիրամոր պատկերը, իսկ եկեղեցին անվանել է Հոգեաց վանք՝ «յանուն Տիրամօրն»[45]։ Անշուշտ, ժողովրդական ավանդության մեջ կարող էր երևնազարդվել պատմական իրականությունը։ Թադեոսի և Բարդուղիմեոսի մասին ժողովրդական երևակայության մեջ առկա վկայաբանական պաճուճանքները, այդ առաքյալների հրաշագործ արարքները, նույնքան հրաշապատում մարտիրոսագրությունը, Հայաստանի առաջին եկեղեցիները հիմնելու մասին պատումները, հասկանալի է, հետևանք են նրանց գործունեության վիպականացման, ժողովրդի վրա առավել ներգործություն թողնելու նպատակադրման։ Բայց սա ամենևին չի նշանակում, թե Հայաստանում առաքյալների գործունեության մասին տեղեկությունները զուրկ են պատմական հիմքից։ Ժողովրդական երևակայությունը սնունդ է առել պատմական իրականությունից, իհարկե, չափազանցնելով այն։ Նկատենք, որ Հայաստանում քրիստոնեության վաղ շրջանում վանքերի ու եկեղեցիների հիմնարկման մասին կան նաև ուրիշ վկայություններ։ Այսպես. Ստ. Օրբելյանը գրում է, որ Սյունյաց Թանահատի վանքի արձանագրությունների համաձայն, այդ վանքը կառուցվել է Հայոց թվականից «460 ամաս յա-

---

40 Տե՛ս Կանոնագիրք Հայոց, Ա, էջ 61—62։

41 Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից աշխարհի, աշխ. Վ. Առաքելյանի, Երևան, 1983, I, Զ, էջ 10։

42 Նույն տեղում, էջ 10—11։ Այս մասին տե՛ս Ն. Ակինյան, Մովսես Դասխուրանցի (կոչված Կաղանկատվացի) և իր Պատմութիւն Աղուանից, Վիեննա, 1970, էջ 70—71, Բ. Ուլուբարյան, Աղվանից կաթողիկոսության ստեղծման հանգամանքների հարցի շուրջը (Հայկազյան հայագիտական հանդես, հ. VII, Բեյրութ, 1979, էջ 39)։

43 Մատթէոս Ուռհայեցի, ժամանակագրութիւն, Վաղարշապատ, 1898, էջ 4—5։

44 Ղ. Ալիշան, Արշալոյս քրիստոնէութեան Հայոց, Վենետիկ, 1920, էջ 30։

45 Մովսիսի Խորենացւոյ Մատենագրութիւնք, Վենետիկ, 1865, էջ 294—295։ Լ. Ս. Խաչիկյանը Հոգյաց վանքի հիմնարկման մասին ավանդությունը համարում է 870—880-ական թթ. Արծրունիների քաղաքական նկրտումների ջատագով հոգևորականի ստեղծած [Լ. Խաչիկյան, Հայ միջնադարյան «Վանից պատմության» գնահատման հարցի շուրջ (Աշխատություններ, հ. Ա, Երևան, 1995, էջ 111—112)]։ Իհարկե, Արծրունիները կարող էին անցյալը չահարկել իրենց քաղաքական նպատակների համար։ Բայց նրանք կարող էին հիմք ընդունել նաև ժողովրդական ավանդությունը, որը, անշուշտ, ունեցել է իրական-պատմական հենք։

առաջ[46]։ Թե՛ այս և թե ուրիշ վանքեր ըստ էության եղել են նաև I դարում քրիստոնեություն ընդունած մենակյացների կացարաններ, որտեղ նրանք կատարել են պաշտամունքային արարողություններ։ Դրանք հետագայում, նախքան 301 թվականը, հետզհետե ձեռք են բերել վանական հաստատության, եկեղեցու գծեր[47]։

Թադեոսի և Բարդուղիմեոսի քարոզչությունը Հայաստանում անցողիկ երևույթ չէր, այլ շարունակվեց՝ վերաճելով կազմակերպչական ուրույն ձևերի, որոնք դարձան նոր կրոնի հարատևման, ամրապնդման երաշխիքներից մեկը։ Դրան կարող էր նպաստել I դ. Մեծ Հայքի նկատմամբ Հռոմի վարած նվաճողական քաղաքականությունը, որի պայմաններում քրիստոնյա քարոզիչները կարող էին որոշ ընդունելություն գտնել Հայաստանում, որպես կայսրության հակոտնյա նոր կրոնի ու գաղափարախոսության կրողներ։ Ի դեմս նրանց, Թադեոսի ու Բարդուղիմեոսի ցանած հոգևոր սերմերը ծլարձակեցին, նոր շունչ ու ոգի առան հայոց հոգևոր անդաստանում՝ բնակչության մի որոշ մասի մեջ սնուցանելով նոր կրոնի գաղափարները։ Այս պայմաններում քրիստոնյա հայերը պետք է պաշտպանեին իրենց և կազմակերպվեին իբրև կրոնական համայնք։ Իհարկե, քրիստոնեության խաղաղ գոյակցումը հեթանոսության հետ հնարավոր չէր՝ վերջինիս մարտնչող անհանդուրժողության պատճառով։ Հալածանքները Հայաստանի քրիստոնյաներին ստիպեցին անցնել ընդհատակ՝ պահպանելով կրոնական համայնքի հատկանիշները։ Ուշագրավ է, որ Փավստոս Բուզանդը քանիցս հիշատակում է Թադեոսի վիճակը, աթոռը[48]։ Հետևաբար, դեռ Թադեոսի ժամանակներից Հայաստանում արմատավորված քրիստոնեությունն ունեցել է իր ղեկավար կենտրոնը՝ հիմնված առաջին առաքյալների կողմից։ Այս է պատճառը, որ հետագայում, հայոց պաշտոնական դարձից (301 թ.) հետո ժամանակակիցները համոզված էին, որ Գրիգոր Լուսավորչի և նրա հաջորդների աթոռը հիմնված է եղել Թադեոսի կողմից[49]։

Նախագրիգորյան հայոց եկեղեցական կենտրոնի գոյության մասին պատմական վերհուշը տեղ է գտել նաև այսպես կոչված՝ Արտազի աթոռի գավազանագրքում, ուր փորձ է արվում Արտազի եպիսկոպոսական կենտրոնը ներկայացնել որպես առաքյալների կողմից հիմնված աթոռ[50]։ Մ. Օրմանյանը հենվելով գավազանագրքի տվյալների վրա, շարադրում է Արտազի եպիսկոպոսների պատմությունը ընդհուպ մինչև III դ.[51], որն իհարկե, չի հիմնավորված, քանի որ նույնիսկ 449 թ. Արտաշատի և 506, 554 թթ. Դվինի ժողովներում Արտազում եպիսկոպոսներ չեն հիշվում։ Արտազյան գավազանագիրքը կազմվել է XIV դ., Արտազում բուն հյուսած կաթոլիկ միսիոներների դեմ մղված պայքարի ժամանակ։ Նրա կազմողները հիմք են ունեցել Հայաստանում Թադեոսի ու Բարդուղիմեոսի քարոզչության և Արտազում Թա-

---

46 Ստեփաննոս Օրբելեան, Պատմութիւն Նահանգին Սիսական, Թիֆլիս, 1910, ԼԴ, էջ 160։

47 Այս առումով հետաքրքիր է, որ Հայաստանի Հանրապետության Հուշարձանների պահպանության կոմիտեի հնագիտական արշավախումբը 1994 թ. ամռանը Շուշիից մոտ 50 կմ հյուսիս ընկած տեղանքում՝ Խաչենագետի հովտում (Վանքասար բլրի լանջին) հայտնաբերել է ժայռափոր եկեղեցական համալիր, որը ստեղծվել է 301 թ. առաջ։ Նրա մերձակայքում եղած ժայռափոր դամբարաններում հավանաբար ամփոփվել են Արցախում, Ուտիքում քրիստոնեություն սերմանող առաջին լուսավորիչների մասունքները (այս մասին տե՛ս Հայաստանի Հանրապետություն, 2. IX. 1994)։

48 Փավստոսի Բուզանդացւոյ Պատմութիւն... III, ԺԴ, էջ 35, IV, Գ, էջ 60, Դ, էջ 62 և այլն։

49 Հմմտ. Պ. Անանյան, Քրիստոնեության հետքեր Հայաստանի մեջ Ս. Գրիգոր Լուսավորչի քարոզչութենեն առաջ, Վենետիկ, 1979, էջ 38։

50 Արարատ, 1868, էջ 102—105։

51 Մ. Օրմանյան, Ազգապատում, հ. Ա, Կ. Պոլիս, 1912, էջ 40—69։

դեռոի նահատակության մասին ժողովրդական ավանդությունը։ Դրան, անշուշտ, կարող էր նպաստել Արտազում ս. Թադեոսի գերեզմանի և նրա անվամբ հռչակավոր վանքի գոյությունը։

Հայաստանում և Իրանում III դ. քրիստոնեական համայնքների գոյության մասին կան արժանահավատ տվյալներ։ Նույն դարի աֆրիկացի մատենագիր Տերտուլիանոսը (վախճանվել է 240 թ.) իր «Ընդդեմ հրեից» (հունարեն) երկում քրիստոնյա ժողովուրդների շարքում հիշատակում է նաև պարթևներին, մարերին, Հայաստանի և Միջագետքի բնակիչներին[52]։ Հետևաբար, Հայաստանի քրիստոնյա բնակիչները մենակ չեն դիմակայել քրիստոնեության դեմ հարուցված բռնություններին։ Նրանց ճակատագիրն ինչ-որ չափով կիսել են նաև հարևան երկրների հավատակիցները։ Հայաստանում III դ. քրիստոնյաների դեմ եղած բռնությունների մասին վկայում է Մովսես Խորենացին, որի հաղորդման համաձայն, կեսարացի Փերմելիանոս եպիսկոպոսը (վախճանվել է 260 թ.) գիրք է գրել քրիստոնեական եկեղեցիների դեմ հարուցված բռնությունների մասին (երկը չի պահպանվել)։ Այդտեղ հեղինակը նկարագրել է նաև հայոց Խոսրով I թագավորի (196—216) և նրա հաջորդների ժամանակ Հայաստանում քրիստոնյաների հանդեպ եղած հալածանքների, բազում հավատացյալների նահատակության մասին[53]։ Պետք է կարծել, որ այս հալածանքները հետևանք էին Հռոմեական կայսրության վարած քաղաքականության։ Դիոն Կասսիոսի վկայությամբ, Հռոմի Կարակալա կայսրը (211—217) թշնամական վերաբերմունք ուներ նաև հայոց թագավորի (Խոսրով I-ի) հանդեպ և նույնիսկ, խաբեությամբ իր մոտ հրավիրելով, կալանեց նրան[54]։ Հասկանալի է, որ կայսրը, որ հայտնի էր քրիստոնյաների դեմ հարուցած բռնություններով, չէր հանդուրժի նաև Հայաստանի քրիստոնյաներին։ Մյուս կողմից, Հայաստանում քրիստոնյաների հանդեպ ծավալված հետապնդումները վկայում են նոր կրոնի հարաճուն ազդեցության մասին։ Ըստ երևույթին, հռոմեական կայսրերի քրիստոնեահալած ուղեգծի պատճառով էր, որ Սասանյան առաջին թագավոր Արտաշիրը (224—241) հանդուրժող էր քրիստոնյաների հանդեպ։ VI դ. ասորի պատմագիր Մշիխա Զեխան, որ օգտվել է II—III դդ. ասորի մատենագիր Հարել վարդապետի՝ մեզ չհասած երկից, գրում է, որ Սասանյանների տիրապետության սկզբնաշրջանում «քրիստոնյաների համար խաղաղության շրջան եղավ, որը և օգնեց այդ կրոնի տարածմանն ու ծավալմանը... Բայց Արևմուտքում հալածանքները երբեք չէին դադարում, և ամեն օր քրիստոնյաների արյունը հոսում էր շուկաներում ու փողոցներում...»[55]։

Գրիգոր Լուսավորչից առաջ Սյունիքում քրիստոնեական կենտրոնի գոյության մասին նշում է սյունյաց պատմիչը[56], անշուշտ, հենվելով իրենից առաջ եղած գրավոր վկայությունների և ժողովրդական ավանդությունների

---

[52] Gabrol, Dictionaire d'Archeologie Chretienne, Paris. 1903, II, p. 1160. Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 16, Մ. Օրմանեան, նշվ. աշխ., էջ 60։ Վ. Հացունին կարծում է, որ Տերտուլիանոսի մոտ Հայաստանի փոխարեն պետք է ընթերցել Հրեաստան (Վ. Հացունի, Կարևոր խնդիրներ Հայ եկեղեցվոյ պատմութենէն, Վենետիկ, 1927, էջ 145—146)։ Բայց այդ կարծիքը չի հիմնավորված։ Հունարեն բնագրում Հայաստան (Արմենիա) և Հրեաստան (Հուդա) անունները գրերով իսկ նմանության եզրեր չունեն։ Ս. Կոգյանը ևս հակված է արբագրելու Արմենիա անունը Տերտուլիանոսի մոտ, առանց ծանրակշիռ փաստեր բերելու (տե՛ս Հ. Ս. Կոգյան, Հայոց եկեղեցին, Բեյրութ, 1961, էջ 53—54)։

[53] Մովսիսի Խորենացու Պատմութիւն..., II, 2b, էջ 212։

[54] Հին հունական աղբյուրներ, Հովսեպոս Փլավիոս և Դիոն Կասսիոս, թարգմանություն, առաջաբան և ծան. Ս. Կրկյաշարյանի, Երևան, 1976, էջ 221։

[55] Տե՛ս Ասորական աղբյուրներ, Ա, թարգմանություն, առաջաբան և ծան. Հ. Մելքոնյանի, Երևան, 1976, էջ 83։

[56] Մատթանոս Օրբելեան, Զ, էջ 33։

վրա։ Առարկություններ չհարուցող վկայություն կա Եվսեբիոս Կեսարացու մոտ, ըստ որի, Ալեքսանդրիայի հայրապետ Դիոնեսիոսը (248—265) «նույնպես և առ Հայս դրեաց թուղթ վասն ապաշխարութեան, որոց եպիսկոպոս էր Մերուժան»[57]։ Հ. Գելցերը Մերուժանին համարում է Վասպուրականի եպիսկոպոս[58]։ Ն. Ադոնցը, վիճարկելով Հ. Գելցերի կարծիքը, գտնում է, որ Մերուժանը եղել է ոչ թե Վասպուրականի, այլ Սոփքի (որը նա համարում է Արծրունիների նախնական ոստանը) եպիսկոպոս[59]։ Բայց այս կարծիքը չի ապացուցվում։ Մ. Օրմանյանը Մերուժանին համարում է Արտազի եպիսկոպոս՝ մոտ 240—270 թթ., ելնելով նրա անվան՝ միայն Արծրունիների տոհմին պատկանելու փաստից[60]։ Սակայն III դ. կեսերին Արտազը դեռևս չէր մտնում Արծրունյաց իշխանության մեջ։ Ղ. Ալիշանը Մերուժանին համարում է Մեծ Հայքի քրիստոնյաների առաջնորդ[61]։ Նույն կարծիքին է նաև Ն. Ակինյանը[62]։ Ավելի հավանական է Մերուժանին դիտել որպես Արծրունյաց իշխանության եպիսկոպոս։ Վերջինիս իրավասության շրջանակները հավանաբար դուրս չէին գալիս այդ իշխանության ոլորտից, որը III դ. ներառում էր միայն Աղբակը և հարակից շրջանները։ Ֆրանսիացի պատմաբան Լ. Դյուշենը, ելակետ ունենալով այն փաստը, որ III դ. կեսերին Հռոմի կայսր Դեկոսի քրիստոնեահալած քաղաքականությունը չէր կարող գործադրվել անկախ Հայաստանում, գտնում է, որ Դիոնեսիոսը պետք է դիմեր Հռոմի գերիշխանությանը ենթակա Փոքր Հայքի եպիսկոպոսին, որը Մերուժանն էր[63]։

Ավելի հավանական է կարծել, որ Դիոնեսիոսը Մերուժանին, իբրև Մեծ Հայքում ապրելիք հոգևոր առաջնորդի, նամակ է հղել՝ ելնելով Հայաստանում քրիստոնյաների համար ստեղծված ծանր կացությունից։ Եգիպտոսի հովվապետը կամեցել է ոգեպնդել Հայաստանի հավատացյալներին։ Ինչևէ, Մերուժանին Դիոնեսիոսի հղած թուղթը վկայում է Հայաստանում III դ. կեսերին կազմակերպված և մյուս եկեղեցիների կողմից ճանաչում գտած եկեղեցու գոյության մասին։ Այն նաև վկայում է, որ Հայոց եկեղեցին անմասն չէր ընդհանրական եկեղեցու ձեռնարկումներին, իսկ վերջինս որոշակի հետաքրքրություն էր ցուցաբերում Հայաստանի հանդեպ։ Թերևս դրանով պետք է բացատրել III դ. սկզբին Եդեսիայից ասորի քրիստոնյա գիտնական Բարդածանի ժամանելը Հայաստան և Դարանաղյաց Անիում հայոց թագավորների պատմությունը շարադրելը[64]։ III դ. վերջերին Հայաստանում քրիստոնեությունն ավելի խոր արմատներ էր ձգել։ Այդ մասին է վկայում Տրդատ III-ի կողմից քրիստոնեությունն արգելելու մասին հատուկ հրովարտակի արձակումը[65] և, վերջապես, նույն Տրդատի կողմից 301 թ. պաշտոնապես քրիստոնեության ընդունումը։

Քրիստոնեությունը պետականորեն ընդունելու փաստը կանխորոշեց նաև մեր եկեղեցու՝ որպես հայոց պետականության ավանդապահի և ազգահավաքման կայուն երաշխիք լինելու հանգամանքը։ Այն անկախության հետամուտ հայ ժողովրդի հոգևոր և պետական կենսունակության, գաղափարական մաքառումների դաշտում նրա ուժի ու կորովի դրսևորումն էր, որը ոչ

---

57 Տե՛ս Եվսեբիոս Կեսարացու Պատմութիւն..., էջ 517 (այս թուղթը կորած է համարվում)։

58 Հ. Գելցեր, Փավստոս Բուզանդ կամ Հայկական եկեղեցվո սկզբնավորություն, Վենետիկ, 1896, էջ 161—162։

59 Н. Адонц, նշվ. աշխ., էջ 347։

60 Մ. Օրմանեան, նշվ. աշխ., էջ 63։

61 Ղ. Ալիշան, նշվ. աշխ., էջ 81—82։

62 Դիոնեսիոս Աղեքսանդրացի, Թուղթ վասն ապաշխարութեան առ Մեհրուժան եպիսկոպոս Հայոց, հրատ. Հ. Ն. Ակինեան (Հանդէս ամսօրյա, 1949, էջ 66)։

63 Հանդէս ամսօրյա, 1910, էջ 269—270։

64 Մովսէս Խորենացու Պատմութիւն..., II, ԿԶ, էջ 201—202։

65 Ագաթանգեղայ Պատմութիւն..., էջ 77։

միայն նախապատրաստեց V դարի մեր մշակույթի ոսկեդարը, այլև Ավարայրի հյուսիսնշանշուն էպոպեան, որին փաստորեն նախորդեց հայոց մարմնամարտի գաղափարաեան գենքով շահված հոգևոր Ավարայրը։

О НЕКОТОРЫХ ОБСТОЯТЕЛЬСТВАХ РАСПРОСТРАНЕНИЯ РАННЕГО ХРИСТИАНСТВА В АРМЕНИИ

В. М. ВАРДАНЯН

Резюме

В 1-ом веке христианские апостолы Товма, Фаддей и Варфоломей, согласно источникам, проповедовали в Индии, Иране, а затем в Армении. В армянских и иностранных источниках (имевших особое функциональное назначение и воспроизводящих народную традицию первых веков н. э.) отмечается также, что Фаддей и Варфоломей занимались проповедничеством и в сопредельной с Ираном армянской области Васпуракан, где и были убиты. На основе этих фактов можно заключить, что вначале они развернули деятельность в Индии, затем в Иране, после чего переехали в Армению, вероятно, в 30-ых годах 1 века н. э., когда в Армении правили римские ставленники, которые, очевидно, и преследовали этих апостолов.